

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒ

ԿՐԱՄ ԿԱՄ ԲՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ  
ՈՒՂՂԵՆ ԱՌ

Տնօրինութիւն ՆՈՐ ՕՐ Լրագրի  
ԳԱՀԻՐԷ

Direction du journal  
NOR-OR  
Caire

Ձեռագիրներն եւ չեն գործարկուի,  
ԱՐՏՕՆԱՏԵՐ Ժ. ՄԻՆՆԻԻ

# ՆՈՐ ՕՐ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ  
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍ  
ԳՐԵ, ՈՂՋ  
Գահիրէի համար Վեցամսեայ 20  
» » երամսեայ 12  
Շրջակայից » վեցամսեայ 25

ԱՐՏԱՍԸՄԱՆՇԱՄԱՐ  
Վեցամսեայ . . . . Զրամգ 7  
ԹՈՒՍԻՑ ԵՒ ԿՈՎԱՍԵ ՇԱՄԱՐ  
Վեցամսեայ . . . . րուբլի 3  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ ԿԱՆԵՐԿՆԷ  
ԵՒ ԲՂԹԱՍԱՐԻ ԾԱԽՔԸ  
Խմբագրութեան վրայի կ

**ՆՈՐ ՕՐ**  
ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՐԱՍԻՐԱՅ ԱԿՈՒՄԲԻՆ  
Պ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆԻ ստորագրութիւնը  
չը կրող «ՆՈՐ ՕՐ» ի ընկալագիրները  
անվաւեր կը նկատուին:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թրամսվալի սշամաւոր պատերազմը որ-  
ուժ համար տարի է մը պիտի վերջանար,  
կ'ընէր շորտ ռուպլերի, ղեւ կը անէ ու  
պիտի տնէ: 4—5000 չափ պատերազմի-  
մեր, քանի մը կտոր հրացան, համեստ պա-  
շար մը բաւական են Պօլերիմ՝ դիմադրելու  
թշմաւոյնը դէմ է ծամամակի մը համար  
երկարածագելու այդ անշահ պատերազմը:  
Անցեալիմ վրայ յետադարձ ակնարկ մը  
Սեպտեմբ, պիտի տեսնենք որ շատ անգամ  
Պօլերիմը մէկ քաղաքիմ մէջ կը յաղթու-  
իմ, կը թողուն որ Անգղիացիք թիւ մը  
քննան, ու յանկարծ կը սկսին վերստի  
յարձակիլ մոյմ քաղաքիմ վրայ:

Սխալ է թէ՛ Պօլերիմը ուժասպառ  
եղած են, Պօլերիմ հրացանը և կամ պա-  
շարը կ'ընէ հատուկ խուկ, թշմաւոյնը երկա-  
թուղիմ գծէն կը հանէ և կամ իմէ կընէ  
չընէր կը հայթայթէ իր պիտոյքը:  
Շորտ Քիւնզեր ինչո՞ւ անջի օրէն  
հաշտութեան խորհուրդ կուտայ. պատ-  
ճառը այն է որ համադրուած է թէ Պօլերիմ-  
ըը զսպելու համար՝ ղեւ բաւական դժ-  
ուարութեանց բախել պէտք պիտի ըլլայ,  
բայց ի՞նչ օգուտ որ՝ ոչ Զէմպլըրէլէյմ և  
ոչ Միլնէր համամիտ չեն Քիւնզերի:

\* \* \*

Եւրոպական դահլիճներու մէջ ղեւա-  
նագէտներու ուշադրութեանը առարկայ  
դարձող խնդիրներէմ միմ ալ՝ Ամերիկայի  
Միացեալ Նահանգաց դէմ՝ Եւրոպական  
միջակակցութիւն մը կազմելու հոգը եղած  
է այսօր:

Եւրոպական պետութիւնները շատոնց  
բաժնած ըլլալով Ամերիկէի սահմանները  
իրենց մէջ, խնդրոյ առարկայ ըլլալիք  
միւթ մը գրեթէ չեն թողուցած հոն: Եթէ  
կամ թռամսվալի ու եգիպտոսի խնդիրները  
անոնք ալ գրեթէ Անգղիոյ պահանջքիմ  
կողմը անցուած են, կընամք ըսել: Գա-  
լով Ամիոյ՝ Ծայրագոյն Արևելքի շուրջը  
դարձած պատերազմը ապացոյց մըն է թէ՛  
այդ երկիրներն ալ որ Ամիոյ մեծագոյն  
մասը կը գրաւեն, օր մը չէ օր մը պիտի  
բաժնուին մրցակից սերութեանց մէջ, որ-  
ոնց զօրքերը դաշնակից բանակի մը հը-  
րամաստարութեանը տակ ղեւ կը շարու-  
նակեն գործել ու մարտնչիլ Զիմացուց դէմ:  
Ուրեմն եթէ կը մնայ մտածմամ առարկայ  
խնդիր մը, այն ալ Ամերիկան է: Մակայն  
բնական է թէ՛ Եւրոպայի պետութիւնները  
Ամերիկայի մկատմամբ չեն կընար մտա-  
ծել այնպէս՝ ինչպէս որ մտածած էին ու  
կը մտածեն Ամերիկէի ու Ամիոյ մկատմամբ:  
Եւրոպացիք կընամ բաժնել և կամ խածնել

Զիմ մը, թռամսվալ մը, եգիպտոս մը,  
հնդկաստան մը, թուրքի մը, թուրքի մը  
և կամ ասոնց բաղադակից ազգեր՝ որ չեն  
կարող շահագործելու իրենց սեպակաւ  
երկիրները յօգուտ քաղաքակրթութեան:  
Բայց երբ ք իրենց երկակայութեան ան-  
գամ չեն անցներ խածնել Ամերիկայ մը  
որ քաղաքակրթեալ Եւրոպան իսկ գերա-  
զանցած է այսօր կընամ ըսել:

Եւրոպայի կատարելիք դերը հանդէպ  
Ամերիկայի միայն սա կընայ ըլլալ—  
կազմել միջակցութիւն մը Ամերիկայի դէմ  
և չը թողուլ որ զօրանայ:

Եւրոպայ իր վախճալու պատճառները  
ուժի, մաս որ՝ Ամերիկայի հակառակ իր մո-  
րութեան՝ անմրցելի և մախաթելի տեղ մը  
կը գրաւէ քաղաքամ մը ծեր Եւրոպայի՝  
շնորհիւ իր բնական դիրքերուն և անհա-  
տուժ հարստութեանը: Երկրորդ՝ Եւրոպայ  
կը վախճայ որ մի գուցէ Ամերիկայ՝ ար-  
գելք մը ըլլալ ի սպազայ ինքններում  
Ամիոյ մէջ, կը վախճայ որ մի գուցէ Եւրո-  
պայի գործաւորական դասակարգը անգոր-  
ծութեան յուսանաւած խուժէ դէպ ի Ամ-  
երիկայ և մտուի ամօր զիրկը:

Անա այս և մամօրիմակ մկատուներ  
կարծեք կուտան Եւրոպացի դիւանագէտ-  
ներու թէ՛ ժամը հասած է միջակցութիւն  
մը կազմելու ընդդէմ Ամերիկայի:

## ԿԻՊՐՈՍԻ ՍՊԱՆԴԱՆՈՅԸ

«Երբ առաւօտուն անկողնէ կենեմ, կամ  
կը լուսնոյմ կամ ո՛չ, կ'սկսին աշխատե-  
նել և այնպիսի ծանր գործեր կուտան որ  
կարողութեանս վեր է. երբ ըսեմ որ միտակ  
չեմ կրնար ընել, այդ խօսքը ըսելու հա-  
մար կը բարկանայ (Տնօրինի համար ըսել  
կուզէ). եթէ անգամ մ'ալ կրկնեմ կ'սկսի  
սպտակել. բայց ի՞նչ ընեմ ձայն չեմ կըր-  
նար հանել. կերակուր կը զրկեն, հագուս-  
տի մասին ալ ունեցածներն զատ չպիտի  
տուն. երբ դնացի ճերմակեղէն ուզեցի ըսա-  
ր ալ զուն իրաւունք չունիս որ և է բան  
անելու. ուրիշ անախտ գործ մ'ալ  
սուիւն, այն է գործարանիս աղտոսու-  
թիւնները վերցնել. եթէ այսպէս շարու-  
նակուի, գիտեցէ որ մեծ հիւանդութեան մը  
ենթակայ պիտի ըլլամ»:

Այս տողերը գրողը, այս տրտուն-  
չը յայտնողը որը մըն է 16 տարե-  
կան, անկեալ ընտանիքի գաւակ, որ  
կիպրոսի Որբանոցի խնամքը յանձ-  
նուած է յանձնարարութեամբ տեղույս  
ազգայիններու:

«Նոր-Օր» ի ընթերցողները՝ նա-  
խորդ թիւին մէջ անշուշտ՝ հետաքրք-  
րութեամբ կարդացած ըլլալու են  
այն տարօրինակ պարագայները՝ որ-  
ոնցմէ ծնած կը տեսնենք այսօրուան

միջազգայր բուրովին նոր, բուրովին  
տխուր. պարագայներ՝ որ մատնանիչ  
կ'ընեն անարդարութիւն հանդէպ որ-  
բին, որ մատնանիչ կ'ընեն անբարո-  
յական, անխիղճ, անբիշ դատարար-  
կութիւն որմով կը սնանին եղեր Հայ  
ազգին որբերը՝ այդ կրթական յար-  
կին մէջ «կիպրոսի կրթարան—Որ-  
բանոց» անուամբ ծանօթ, որուն հա-  
մար ինչո՞ւ չընենք սպանդանոց, հոն  
ուր ակնատես կըլլայ մարդ քաղա-  
քակրթութեան չը ներած տեսիլքնե-  
րուն, և որոնց դէմ ոչ թէ իբրև Հայ,  
այլ իբրև մարդ կը բողոքենք:

Մենք չենք բաղձար հանրային  
զայրութիւն գրգռել դէպի հաստատու-  
թիւն մը որի գոյութիւնը կենսական  
կարևորութիւն ունի ազգին համար,  
բայց չենք կրնար ալ թողաւոր որ  
այդպիսի հաստատութիւն մը զբ-  
նանոց յանձնած ենք Հայ ազգի որբ  
զաւակները, և որմէ կը սպասենք ա-  
մէն հայրախնամ ու արդար հոգա-  
ծութիւն, չարաչար գործածէ իրեն  
յանձնուած վստահութիւնը:

Որբանոցի նուիրական ըլլայ այդ հաս-  
տատութիւնը, կիպրոսի կրթարան—  
Որբանոց անուամբ ծանօթ, ո՛րբան  
ալ յանձնարարելի ըլլան զայն վա-  
րող կղզիաբնակ վարիչները, երբ կը  
գտնուիմ այնպիսի ահաւոր փաստե-  
րու առջև որոնք բնութիւնը ունին  
կասկածի տակ դնելու Որբանոցին  
տիգերական խանդով ծափահարուած  
վարկը, որ կը ջնջին այն բող-  
ցըր տպաւորութիւնը զոր թողուցած  
էին մտքիս մէջ՝ մերթ ընդ մերթ այդ  
կրթական հաստատութեան հասցէին  
ուղղուած շնորհակալեաց ազմուկները,  
և բարձրացած ուսանանները, կ'ամ-  
փոփուիմ պահ մը և կը հասկնամ որ  
սխալած եմ եղեր իմ համարումիս  
մէջ ինչպէս ուրիշները, ալ չեմ յա-  
մառիր վստահութիւնս շարունակել  
կուրօրէն ինչպէս որ ոմանք կը շա-  
րունակեն, չեմ կրնար բերանս սրբել  
այդ կեղտոտ և եպերելի արարքին դէմ  
որ այնքան անմեղութեամբ մատնա-  
նիչ եղած կը տեսնեմ Ղևոնի նամա-  
կին մէջ, յատկապէս յօդուածիս զը-  
լուխը գրուած, չեմ կրնար լուի հոն  
ուր կը տեսնեմ ոչ միայն Ղևոնի մը,  
այլ Ղևոնի նման իսկ մը աս-  
տանդական որբերու շահը՝ խաղալիք  
դարձած տնօրէնի մը քմահաճոյքին,

անհատի մը հաճոյք պատճառելու հա-  
մար չեմ կրնար անտես ընել ազգա-  
յին գերագոյն շահը, որովհետև չեմ  
ուզել նմանիլ այն Ռուսիաէտին որ  
ի սէր ափ մը կաշառքի և կամ բարե-  
կամական ու բարոյական ո և է ակրն-  
կալութեան կը լուէ պատուոյ, ինչքի,  
և կենաց դէմ գործուած ո և է բունա-  
բարման դէմ, ոտնակոխ ընելով հան-  
րութեան անդորրութիւնը. նա՛ որ  
հանրային անդորրութեան իբրև ներ-  
կայացուցիչ և պաշտպան պարտաւոր  
է պատիժ տնօրինել տալ ոճրագործին,  
ոչ թէ պատճառ ըլլալու համար ոճրա-  
գործը, այլ անոր գործած ոճրին շուրջը  
տիրած ահ ու սարսափը հանդարտե-  
ցնելու, և վրդովեալ անդորրութիւնը  
վերահաստատելու համար:

Նոյն պարտը կը դնէ մեր վրայ  
մամուլը իբրև հասարակաց ձայնին  
օտկան, բողոքելու համար այն ամէն  
զեղծումներու դէմ ուր հանրութեան  
շահը վստահուած կը տեսնուի:  
Ինչո՞ւ չի բողոքեմք ուրեմն՝ երբ՝  
որբեր պատասպարելու և նոր ողջա-  
միտ սերունդ մը պատրաստելու յատ-  
կացուած հաստատութիւն մը վերած-  
ուած կը տեսնենք Սպանդանոցի մը  
ուր կերթան ոչնչանալ Հայ ապագայ  
սերունդի սերմերը:

Սոյսպիսի պարագայի մէջ լու-  
թիւն ուրիշ բան չի նշանակել, բայց  
եթէ բաջալերել մեզսանաց հեղինակ-  
ները ու գործուած ոճրին վրայ ոճիր  
մը ևս անեցնել:

\* \* \*

Արդեօք Որբանոցի Հայրախնամ  
Տեսչութիւնը իր այսքան ծանրակշիւ  
պատասխանատուութեանը մէջ պիտի  
կրնայ արդարացնել զինքը:

Երբեք՝ ճշմարտութիւնը դատելու  
համար բաւական է ուշի ուշով կար-  
գալ նոյն ինքն Գեր. Պ. վարդապետ  
Սարաճեանի նամակը, «Նոր-Օր» ի  
նախորդ թիւով հրատարակուած, որը-  
ուած ըլլալով իր մեծ կշիռը խնդ-  
րոյն վրայ լոյս սփռելու տեսակէտով  
Հայր Սուրբը, իբր օտկան Տեսչու-  
թեան, իր բուր միտմտութեամբ կը  
խոստովանի հոն թէ՛ Ղևոնը ապտակ  
կերած է, բայց ոչ իբրև վրայ. այլ  
մին միւսէն 13 օր վերջը, թէ՛ Ղևո-  
նը խոհարարին սենեակը պառկած է,  
թէ՛ բազաւամբ իր յանցանքին իր  
կրած պատիժը խիտ թեթեւ է:

(Տեղույս անձկութեան պատճառաւ՝ մը-  
նացեալը յաջորդ թիւով):

ԵԳԻՊՏՈՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ

«Նոր-Օր»ի 94 երրորդ թիւով Եգիպտոսի նախկին Առաջնորդ Մեւրոպ Եպիսկոպոսի տեղւոյս ազգային գործերուն մէջ կատարած գերբեր մի առ մի թուելով, պարզեցինք նաև այն բարոյական ու նիւթական մեծ անկումը զոր Ազգը դժբաղդորէն կրեց այդ կաշառակեր Առաջնորդին օրով:

Մեւրոպ Եպիսկոպոսէ յետոյ Եգիպտոսի Առաջնորդ ընտրուեցաւ Իզմիրլեան Սրբազան, որի առաջնորդութեան օրով անցած դարձածը մանրամասնաբար պիտի նկարագրենք, և վստահ ենք թէ հետաքրքրութեամբ պիտի կարդացուին ամէն ազգայնոց կողմէն, տրուած ըլլալով մեծ շահեկանութիւնը տեղւոյս ազգային գործերու տեսակէտէն՝ և ի մասնաւորի այն մեծ համակրանքը զոր կը տածէ այսօր ամէն հայ զէպ ի այդ մեծանուն և բարձրաստիճան կղերականը:

Յօդուածնիս երեք մասի բաժնած եմք, որուն առաջին մասը ներկայ թիւով կը հրատարակենք, յաջորդաբար ալ հրատարակելով երկրորդ և երրորդ մասերը որ պիտի պարունակեն խորհն Նար Պէյի այցելութիւնը յԵգիպտոս և տեսակցութիւնը Իզմիրլեանի հետ, Իզմիրլեան Սրբազանի խիստ շահեկան տեղեկագիրը Եգիպտոսի ազգային գործերու վրայ և իր հրատեղումը:

Ա.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՍՐԲԱԶԱՆ

1886 Մարտ 17ին միջօրէն երկու ժամ առաջ Եգիպտոսի նախկին Առաջնորդ Իզմիրլեան Սրբազանը բերող շոգնաւը կը հասնի Աղեքսանդրիա: Հանգուցեալ թագաւոր փաշա Յակոբեանի յանձնարարութեամբ կայսերական նաւարանը հինգ զոյգ թիւերով մի նաւակ կը յատկացնէ ընդունելու համար զՆ. Սրբազանութիւն:

Թագաւոր փաշա Յակոբեան և Աղզ. ժողովոյ անդամ Վսեմ կարապետ պէյ Բիզան, արդի խորհրդական Աղեքսանդրիոյ Միջազգային Վերաքննիչ ատենի, Իզմիրլեան Սրբազանի ձեռքը բռնելով եղբր կը հանն ու կ'առաջնորդեն զՆ. Ս. ուղղակի Աղեքսանդրիոյ Եկեղեցին, որ զեռ նոր կառուցուած էր: Շքեղ արարողութիւններ կատարուելէ վերջը ի պատի Սրբազանի, որոնց մանրամասնութեանը մէջ մանկու հարկ չի կայ, հետեւեալ օրը Ն. Ս. ընկերակցութեամբ Գահիրէի պատուիրակութեան կը մըսնէ շոգնաւը զէպ ի Գահիրէ գնալու: Մինչև Պէյնա և թանկիս՝ բազմաթիւ ազգայիններ Ն. Սրբազանութիւնը զիմաստրելու կերթան: Իզմիրլեան Սրբազան, ժամը 3ին կէսօրէն յետոյ անդրանիկ ողջոյնը կ'ուսայ Գահիրէի ազգայնութեան, որոնց սիրտը զեղուն էր անհուն ուրախութեամբ:

Իզմիրլեան Սրբազան քանի մ'օր վերջը կը ներկայանայ Բարձր. Խախի թէւթիկ փաշայի, կայսերական հրովարտակն և իր յարգանքն մատուցանելու համար: Այնուհետև կը ձեռնարկէ գործի, ու կը տքնի չորս տարիներ անդադար:

Թէ ինչ եղած են Մատթէոս Եպիսկոպոսի պաշտօնավարութեան օգուտներն յԵգիպտոս, քանի մը թուանշաններ ու ծանօթութիւններ՝ երկար խորհրդածութիւններէ աւելի յատկապէս մը կրնան տալ: 1886 Մարտ 17ին յարում Ն. Սրբազանութիւն իւր առաջնորդական պաշտօնի զըլուխը կ'անցնէր, Գահիրէի ազգային Սրբատուն 1,200 ոսկի պարտք ունէր 10 առ 100 տոկոսով, և տարեկան երմացոյցն 270 ոսկոյ բաց մը. այսօր այդ պարտքն հատուցուած է ամբողջովին, և երմացոյցը՝ բաց չունենալէ զատ, փոքր յաւելում մըն ալ ցոյց կուտայ: Պարտուց վճարման զըլուխը գործն ի պիտի ելած է նախաձեռնութեամբ Տիկին Նուպար փաշայի և աշխատութեամբ հանգուցեալ թագաւոր փաշայի, որոնց ազգասիրական զգացմանց կոչումը բաժն էր նորընտիր Ս. Առաջնորդը: Տիկին Նուպար փաշա աւելի գործնական միջոց մը չի գտաւ քան իր հովանաւորութեան ներքեւ պարահանդէս մը կազմակերպել որուն արդիւնքն եղած էր 900 ոսկի. այս գումարին վրայ աւելնալով զանազան նուիրատուութիւնք, պարտքը զոցուած է: Գահիրէի ազգայնոց մտքն մէջ զեռ անշնչել է յիշատակըն Օբերայի թաւարնին մէջ արուած այդ շքեղ պարահանդէսին որ խորիվական պաշտան մէջ տրուած երեկոյթի մը չափ փառունեցած է, կը պատմեն, մասնակցութեամբ օտարազգի երեկեաց: Նուպար փաշա, յայնժամ նախարարապետ, պարահանդէսի երեկոյթին այցելութիւն տալով Իզմիրլեան Սրբազանին:

—Այս տարիքիս մէջ ինձ պարել պիտի տաս, ըսած է ծիմարկելով:

Եւ արդարև, Նուպար փաշա և Տիկինն այդ հանդիսի յաջողութեան համար զոհողութիւններ յանձն առած էին, որոց մեծագոյն իրենց պարելը չէր:

Պարտուց վճարումը ի կատար հանելէ յետոյ, Իզմիրլեան Սրբազանը իր հոգածութեանը զիւսուոր առարկայ կ'ընէ Գահիրէի Եկեղեցւոյ և Առաջնորդարանի նորոգութիւնը, կը կազմակերպէ Գիւնախառնուր, արթնուան մէջ իրարու վրայ ժողովներ կը գումարէ: Երեսնութեանց ու նորոգութեանց մէջ Եգիպտոսի հայ մեծատունը շին զրահար իրենց աշակցութիւնը և դրամական նպաստները, բայց գործը ի պիտի ելած է միջոց ու միջոց Եզմիրլեանի անվիստ անշահախախտ աշխատութեան և ազգային իրաւունքներն շնորհիւ:

Այս զողջուն տողերուն մէջ չեմ կըրնար անցնիլ առանց պատմելու՝ այն տեսակ մը սպաւորութիւնը զոր ունեցած եմ, վիճակիս արդի Առաջնորդ Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեանի մէջ երկու գործերուն առթիւ և զոր միջանկեալ ըլլալով պատմելու թոյլտուութիւնն պիտի ունենամ:

—Այվազեան Սրբազանի Գահիրէ հասնելէն մեկ երկու օր վերջը՝ երեսփոխանական համագումար ժողով կը գումարուի որ նորընտիր Առաջնորդը կը հրատարակ իր «խօսք»ը ընկը ըստ օրինի:

Այվազեան Սրբազանի առաջին խօսքը կըլլայ ժողովէն պահանջել իր վեցամեակային կանխիկ վճարումը: Ժողովոյ անգամները յանշափս յապուշ կը կրթին Սրբազանին անակնկալ առաջարկէն, և փոփոսել մըն է կը սկսի անգամաց մէջ: Սակայն Սրբազանը այնքան ազգու կերպով, և այնքան եռանդեալ կը շեշտէ կարեւորութիւնը իր առաջարկին, որ ժողովոյ անգամները ամթանար կը զիջանին: Վերջապէս Սրբազանը իր անձնական հաշիւը փայտայելէ վերջը, զբանջանին վրայ կը գնէ, ինչպէս սր առաջուց

ալ գրած էինք, վարժարանի վերաշինութեան խնդիրը, քանի մ'օր վերջն ալ կը դիմէ Վսեմ. Տիգրան փաշայի՝ խնդրելով հովանաւորութիւնը ի նպաստ Որբախնամներու տրուելիք ներկայացման, ոչ մին ոչ միւսը կը յաջողի: Ն. Վ. Տիգրան փաշա ցաւ ի սիրտ կը մերժէ ձեռնուի և նորընտիր Առաջնորդին խնդրքը: Ամիկայ կը պատահի ճիշտ այն պահուն երբ Աղեքսանդրիոյ ազգայինները Չիզինեայի մէջ ներկայացում մը կը կազմակերպեն ընդ հովանաւորութեամբ Վսեմ. Պօղոս փաշա Նուպարի:

Վերադառնալով մեր նիւթին՝ Իզմիրլեան Սրբազան կրթական գործին ալ կը սկսի ոյժ տալ: Ազգ. վարժարանը որ յառաջագոյն ամսական 19 ոսկոյ նպաստ միայն կը ստանար եկեղեցւոյ Մատուկէն, Իզմիրլեանի օրով կը ստանայ 30, այն ատեն որ զպրոցի անսպասելի կը վարէր արդի զիւսուորացեալ Տ. Նազարէթ Մ. Աղազար: Իզմիրլեան Սրբազան շարունակ մտնել կը հսկէ վարժարանին վրայ, և ամսական նպաստին յաւելում մը՝ որ արդիւնք է իր անօրինութեան, շօշափելի անպացոյց մը կ'ուսայ թէ իր առաջնորդական զբաղմանցը մէջ բարձի թողի չընէր զաստիարակութեանգործը:

Իզմիրլեանի օրով Գահիրէ ազգային Մատուկէն մէջ 4,000 ոսկի սպասարար զբարամ կար, որուն 1,000 ոսկիով կը կառուցուի մեծ շէնք մը, Պէն-էլ-Սուրէյի փողոցին մէջ: Իսկ միացեալ 3,000 ոսկոյ գումար կը յատկացուի 123 ֆէստան տարածութեամբ արտի մը գուման Պէն-ի-Սուրէյի միտիթիլթի մէջ, որ տարեկան 200 ոսկի հասույթ կը բերէ:

Աղեքսանդրիայէն ականատես եղողները ի մասնաւորի Պ. Տիգրան Այվազ ասպէս կը նկարագրէ Իզմիրլեանի գործունէութիւնը նամտանաւնց արտի գուման առթիւ:

«Աղեքսանդրիա կը գտնուէինք այն միջոցին երբ բանակցութիւնք կը կատարուէին այդ արտի գուման համար, ուր տեսնեք թէ ինչպէս սիրայօժար իրենց ժամանակը կը զոհէին Պօղոս փաշա և այլ ժողովականք, ժամագիր ըլլալով Գեր. Առաջնորդի հետ, երթալ անձամբ տեսնելու համար գնելի հոգն ու կարելի եղած շահաբեր պայմաններով գործելով. տեղացի ազգայինք ալ, հիւրերն ալ, ճշմարիտ գոհունակութիւն մը կը զգային տեսնելով այս անձուր գործունէութիւնն ու ազգային դրամոց գործածութեան մասին տիրող ինայասէր ոգին. վերջոյ շեշտ կայուածին ու արտին եկամտից մէկ մասը յատկացուցեալ եկեղեցւոյն, զպրոցին, արդ. պաշտօնէից և աղբատաց. աղբատներ որոնք ոչ միայն նպաստ մը խնդրելու համար կը դիմեն Առաջնորդարանին, այլ և յանախ առանց դրամի, առանց պաշտպանի, եղիպտական հողի վրայ վստարեալ հայեր են որք ուղեւորութեան ծախք կը խնդրեն. Առաջնորդարանը հայրաբար կը հոգայ այս ամենը, աղբատաց ձեռք կարկառելով և անոց անօգնական ճամբորդներն իրենց տեղը վերադարձունելով»:

Իզմիրլեանի նախաձեռնութեան արդեամբ շինուած են Աղեքսանդրիոյ Առաջնորդարանն ու ազգ. վարժարանը, իսկ Աղեք. եկեղեցին իր եկած տարին արդէն շինուած էր, արմաւենեաց ընդարձակ պարտէզին մէջ, բաղաբն ժողովէն հետի:

Այսպէս, մինչ ասպին ձեռնարկուած էր արտի գուման և առաջնորդարանի վերաշինութեան, անպին՝ Վսեմ. Տիգրան փաշա իր բարձր ազդեցութիւնն ի գործ կը դնէր Տալիբայի Սանայի հետ միացնելու համար ազգ. ստացուածքն եղող Հիւստի ի պատիւնն որ 30 անշատ կտորներէ կը բաղկանայ: Այս

միացում պէս պէս օգուտներ ունի որոնց զիւսուորն է հաստիքից առաւելութիւնը: Նուպարեան գերդաստանն և իրենց ազնուոգի փեսայն շին շատանար սակայն սուկ իրենց ազդեցութիւնն ի գործ գնել և բարոյական աշակցութիւնը նուիրելով: Նուպար փաշայի վաղամեակի գտեր (տիկին Տիգրան փաշա) թէրէքէյի հաշուէն 3439 1/2 գաղիական ոսկի ստացած է Եգիպտոսի ազգ. Մատուկը. բաց աստի Տիգրան փաշա իր տիկնոջ յուշարկաւորութեան առթիւ նուիրած է 1,000 ֆրանք զոր թագ. Խորհուրդն յատկացուց եկեղեցւոյ խորանին ոսկեգոծման:

Երկար կըլլայ մի առ մի թուել սատ բոլոր այն նուիրատուութիւններն որք եղած են Գեր. Մատթէոս Եպիսկոպոսի առաջնորդութեան օրով. երբ ժողովուրդ ու մեծատունք հասարակութեան կը սիրեն ու կը յարգեն իրենց Առաջնորդն, յայնժամ ո՛րն իր լումայն, ո՛րն իր ազդեցութիւնը, ո՛րն իր անձուր աշխատութիւնը կը նուիրեն ինքնակամ, և ճշմարտութիւնը միայն յայտարարած կ'ըլլանք երբ ըսենք թէ Իզմիրլեան Սրբազան լիովին կը վայելէ այս համարումն ու սերը:

Մատթէոս Եպիսկոպոս իրապէս հոյակապ գործեր կատարած է յԵգիպտոս, բարեկարգելով ազգային կալուածոց մատակարարութիւնը, բաժնաւոր պարտքերը, բարեզարդելով եկեղեցի ու դպրոց, հարթելով կրճատ խնդիրներ, և որ մեծն է քան զայստիկ, իր անձնական ներշնչմամբ՝ ազգային գործոց զուլին համախորհելով բարձր անձնաւորութիւններ: Եւ յերախ Վսեմ. Տիգրան փաշա Ապրո, նախկին նախարար արտաքին գործոց նախարարութեան Եգիպտոսի, Իզմիրլեան Սրբազանի յորդորանոց միայն յօժարած է ընդունիլ Ընդհ. Ժողովոյ Ատենապետի պաշտօնը, պետական զբաղմամբ գրաւեալ իր սուղ ժամերուն մէկ մասը նուիրելով ազգային գործոց. Վսեմ. Պօղոս փաշա, Բարձ. Նուպար փաշայի տաղանդաւոր որդին, Ն. Սրբազանութեան ստիպմանց վրայ ընդունած է Աղեքսանդրիոյ Ազգ. Վարդութեան Ատենապետի պաշտօնը. նոյնպէս և այլք, անկախ զրից տէր և արժանաւոր անձինք, որք առաւել կամ նուազ գործօն մասնակցութիւն կը նուիրեն: Երբ առաջնորդ մը կը յաջողի այսպիսի տարբերով զօրացնել իր նախագահութեան ներքի կազմեալ ժողովները, բնականաբար ժողովրդեան համարումն ու վստահութիւնը կը կրկնապատկին: Բայց մեծամեծաց գործակցութիւնն ապահովելով, Իզմիրլեան Սրբազան չէ հետեւած այնպիսի ուղղութեան մը որ համեստ կացութեան տէր ազգայինք, արհեստաւորք, խանութպանք, անոնք որ բուն ժողովուրդը կը կազմեն, հետի մեան ազգային գործերէ. ընդհակառակը տեսնեք ասոնցմէ շատերը որք մեծ անձնութիւններէ կ'աշխատէին իր հոգաբարձու, ժողովական և այլն: Այս համերաշխութիւնը, պէտ է խոստովանիլ, անցիլայն մէջ ամեն ժամանակ տեսնուած չէր Եգիպտոսի ազգային գործոց մէջ զորս Իզմիրլեան Սրբազան շանահար եղած է, տեղական հանգամանաց ներսած աստիճանին մէջ, սահմանազրապէս կատարելով:

ՅԱՌԱՅԵԿԱՅ Թուով պիտի հրատարակենք Վսեմ. Աղիզ պէյ Եուսուֆի մի շահեկան տեղեկագիր ամբողջով: Շէյխ Էթմանի խնդրոյն վրայ, ինչպէս նաև Տ. Խ. Զոհրապի նամակն Այվազեան-«Նոր-Օր» միջադէպի առթիւ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԷՕՆ ԹՈՒՐԻՔԻ ՄԸ ԱՆԵՐԵՒՈՒԹԱՅՈՒՄԸ

Տեղադրյալ երոպական և արաբական թերթերը մեծաւ մասամբ կը շարունակեն խնդրոյ նիւթ ընել Լէօն Ֆրանսիայի միջոցաւ անհարձակ անհրաժեշտութեամբ Լէօն Ֆրանսիայի ազգաւ Հայ իսկ սկզբունքով թուրք, Հայկական կոտորածներու ժամանակ հայաստանց Զեքի փաշայի նախագահութեամբ Հայաստան զրկուող քննիչ յանձնաժողովոյ բարուազարի պաշտօնը վարած, Ժէօն-Թուրքերու կուսակցութեան ինքնակոչ Լիսթրնէրէն մին, վերջերս ալ Եղիպտոս եկած «Միզանը Ատալէթ» անուամբ թերթ մը կը հրատարակէր, իբր օսկան Ժէօն-Թուրքերու կուսակցութեան:

Լէօն Ֆրանսիայի անհրաժեշտութեամբ ինչ պարագայներու տակ տեղի ունեցած է, այս մասին տրուած տեղեկութիւնները զիրար չեն բռնիր: Ինչպէս որ «Էթիփսին կազէթ» կը գրէ, ճիշտ է թէ՛ ասկից երկու ամիս առաջ թուրք կառավարութեան կողմէն լրտես մը կը յորդորէ Լէօն Ֆրանսիայի որ Պոլիս վերադառնայ, ուր իրեն խոշոր գումար մը վարձատրութիւն խոստացուելէ զատ կարեորագոյն պաշտօն մ'ալ պիտի չնորհուի: Լէօն Ֆրանսիայի այս խոստումներէն շրջած՝ կը հաւանի մեկնել ու ճամբայ կեննէ դէպի Պոլիս: Երբ շոգենաւ փերէի կը մտնենայ, Լէօն Ֆրանսիայի յանկարծ միտքը կը փոխէ ու կ'ենչայ փերէ, ուրկէ վերադառնալով Ազեքսանդրիա կը վերադառնայ: Ազեքսանդրիա հասնելէն քանի մը շաբաթ վերջը՝ Ալի պէյ անուամբ թուրք մը՝ բարեկամութիւն կը հաստատէ Լէօն Ֆրանսիայի հետ, ու իր աշակցութիւնը կը խօստանայ Լէօն Ֆրանսիային եթէ սոյն վերջինը շարունակէ իր պայքարը Սուլթանին դէմ: Քիչ յետոյ Ալի պէյ կ'առաջարկէ Լէօն Ֆրանսիային որ միտին ընկերանայ մէջէն Բասէլթիին խտրական պալատը: Ղեկնք ներկայացնելու համար հանտեղի մի բանի բարձրաստիճան և ազատամիտ պաշտօնեայնորու:

Թէպէտ և Լէօն Ֆրանսիայի անասան մատահութիւն ունէր իր բարեկամին վրայ, բայց և այնպէս Պալատ Երթալու և այսինչին այսինչին ներկայանալու խօսքը իր միտքը պղտորեց որով զեռ Պալատ չի գնացած՝ իր բարեկամներէն Պետրոս Աշաբի պատուիրեց որ՝ եթէ մինչև ժամը 3 չը վերադառնայ, Լորտ Գոսմերին հետոքըն: Այդ թուականէն ի վեր Լէօն Ֆրանսիայ մէջ տեղ չիկայ:

Ոմանք կ'ըսեն թէ Լէօն Ֆրանսիայ երեք օր առաջ Ռասէլթիին ծովեղբերեայ խտրական պալատին մէջ բանտարկուեց, ու անկէ ուղղակի բռնի Ռուսական շոգենաւով Պոլիս զրկուեց է: Մինչդեռ «Բիւսալիտ» կը գրէ թէ՛ Ն. Բ. խտրվը միջոցաւ իմանալուն պէս՝ խիստ հրամաններ տուեց է գաղտնի ոստիկանութեան: Երեկառաւուս Լորտ Գոսմեր և Պ. կորսթ Ազեքսանդրիա իջան խորհրդակցելու համար օրուան խնդրոյն վրայ:

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

ՆՈՒՊԱՐԻ ԱՌՈՒԱՄՈՒՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Աթոռամտութեան վրայ երկար բարակ խորհրդածութիւններ ընելէ վերջ կ'ըսէ «Հայրենիք»:

Ընկերութիւնները Լէօնոսի մէջ, ընկերութիւններ փարփել կամ Նիւ-Եօրքի մէջ, մէկը միւսին ետեւ կը բռնան ստնկիցէս ու կը թոռմին, կը թոռմին՝ որովհետեւ ոչ թէ գործ մը կատարելու իրական բազանքն է, որովհետեւ ոչ թէ Հայրենիքին թշուառութեան խորունկ դիտակցութիւնն է որ կը վարէ հիմնադրիներու մեծագոյն մասը, այլ ատենապետի, ատենադպրի աթոռները բռնելու տենչը, «չոջ» ըլլալուն սին փառքը:

Մէկ աթոռի վրայ երկու հոգի չի սղմիր. ուստի տակէն ըսած է անհրաժեշտութիւն մը, որ բոլոր այդ... «Հայրենասէրները» զատ զատ ընկերութիւններ կազմեն, իրենց թոյլ ուժերը նախաձեռն պայքարներու մէջ տարողնելու համար:

Եւ աս է պատճառը որ այս տար տարուան միջոցին այդ ընկերութիւնները զբրական շատ՝ շատ քիչ օգուտ կրցան արտադրել, զէթ այն միակ օգուտը որ կըրնայինք սպասել անոնցմէ — Հայ գատին փրօփականը Եւրոպայի մէջ:

Աթոռամտութիւնը մեր արդի բարբերուն ամէնէն տեղ կոզմերէն մէկն է, ճարակուած տեղա խաւերն աւելի, ուսեալ կարծուած դասակարգին մէջ:

Սկիւմ յիշելով ամէնէն մեծ դեմքը այդ աթոռամտութեան — Նուպար փաշան: Ուսեալ մարդ մը, դիւանագետ մը, զիրքի տէր, Եւրոպայի բարձրակարգ շրջանակներու հետ սերտ յարաբերութիւններ ունեցող ու մշակող մէկը, որ կրնար մեծամեծ ծառայութիւններ մատուցանել իր արհեստիցիներուն, բայց որ բացարձակապէս ոչինչ չըրաւ, ոչինչ... Մէկ անգամ մը միայն յիշեց թէ ինքը Հայ էր, Պերլինի վեհաժողովի ասեն, երբ յոյսեր կը տածէր հինգ հայկական նահանգներուն ընդհ. նահանգապետն ըլլալու, — աթոռը նստելու...:

Չիրականացան յոյսերը. իր ծրագրերը մերժուեցաւ: Ներքեւ վարձապետեանէն, և Նուպար քիթ ըրաւ հայ ժողովրդին: Չեղբ քաշեց այդ ապերախ ազգէն, որուն պատրիարքը զլացած էր իր փառատենչիկ խորհուրդներուն գործիքը ըլլալու: Ընդհ. նա հանգապետական աթոռն իշխանական գահը՝ հեռու չէր. ինչո՞ւ ցորթ մը ըլլար «Նուպարեան հարստութեան» թագն աւելցնելու Ռուբինեաններուն ըզլիւր... Ապերախ ժողովուրդ:

Եւ Նուպարը Պերլինի գաշնադրէն ետք այնչափով յիշեց իր հայ ըլլալը որքան անկէ առաջ: Գլուխը քաշեց մտաւ իր պատեանը:

Ահաւասիկ Նոր Օրի դեռողութիւնները. իբրաւ է թէ հանրային կարծիքը ի վաղուց դասապարտած է Նուպար փաշան, որ իր հոյակապ զիրքին համապատասխան՝ ազգին օգտակար համարուելիք հոյակապ ու է գործ մը կատարած չէ: Բայց ինչո՞ւ չի քննենք իրերու ընթացքը տրամաբանորէն: Միջոցաւ որ մեծ ազդեցութիւն ունի անհատի մը խորհելու, գործելու և տրամադրելու եղանակին մէջ, արդեօք չի կրցաւ միեւնոյն ազդեցութիւնը ունեցած ըլլալ Նուպարի վրայ:

Նուպարի միջոցաւ Եղիպտոս եղած է, և այնքան պղտիկ հասակին մէջ եկած է հոն Նուպար, որ թէպէտ ազգաւ Հայ, բայց բարբով Եղիպտոսի մը եղած է: «Թան» լրագիրն ալ ըսած էր օր մը թէ՛ «Նուպար թէպէտ Հայ ծնած է, բայց բարբով Եղիպտոսցի է»:

Նուպարի մեծցած ու տիեզերական համբաւ չինած այդ միջոցաւ՝ ազգային տեսակետով այնքան ամուլ էր որքան ապերախտ: Նուպարը շրջապատող ազգայինները՝ զիրքով ու ազդեցութեամբ իրմէ վար էին, ամենքն ալ իրեն մահաւայտներն էին, անոր շնորհիւ զիրքի տէր եղած: Հետեւաբար առնցմէ և ոչ մէկը կը համարձակէր գէթ խոնարհ խորհրդատուի մը դերը կատարել Նուպարի հանդէպ: Կղերը իր ազդեցութիւնը ունեցած չէր, ի բաց առեալ իզմիրլեանէն որու կարճատե պաշտօնավարութեան մէջ, ինչպէս կը անանուի այսօրուան թիւին մէջ իսկ, Նուպար օգտակար եղած է:

ԴԱՏԱԿԱՆ ԳՐՈՆԻԿ Ե ԳԻՊՏԱՀԱՅՈՑ

Այսու հետև «Նոր-Օր»ի մէջ պիտի յատկացնենք բաժին մը Եղիպտոս Հայ դասերու քրոնիկէն:

1. — Ըստ 1900ի Մայիս ամսոյ խտրվաւ կամ հրովալտակի՝ մեծգութեամբ սեմնկացեալները, ըլլան օտարոնապատակ, ըլլան տեղացի, պիտի դատուին Միջազգային դատարանի պատճառով ատենի առջև որուն ամբար պիտի ըլլան երեք միայն ու դատաւոր և չորս առժամայ:

2. — Նեմգութեամբ սեմնկացողները պիտի դատաւարուին մինչև 5 տարի բանտարկութեամբ, միջնդեռ ամբարտակցաբար սեմնկացողները պիտի դատաւարուին մէկ ամիսէն մինչև երկու տարի բանտարկութեամբ:

Վերջին չորս շաբաթուան ընթացքին մէջ երկու նշանակելի գառեր կանչուեցան Եղիպտոսի դատարանայ առջև, մին պատժակոն միւսը առն տրուիսն:

1. — Պալատաւ Ղուկասեան, — Խորհրդի վստահական մը՝ նենգ անանուութեամբ ստրատանուած ըլլալու մեղաւոր Միջազգային դատարանի պատճառով ատենի առջև: Նին առջև դատուեցաւ:

«Փըթի Էմիլիոն» Փրոնսաթերիլ իր կիրակնօրեայ դատական բրօնիկին մէջ ոչ ոսթիւ հետեւեալը կը գրէ:

«Միջազգային պատճառով ատենաւ իր Յունիս 17ի նիստին մէջ գատեց զՊ. Պալատաւոր Ղուկասեան: Ընդհանուր դատախազը պահանջեց որ ատրատանեալը իր նենգատ սր սենակ պատճառով որինայ 293 երրորդ յոգուածի արամադրութեան համաձայն (որուն համար հինգ տարի բանտարկութիւն սրոյած է):

«Իսկ ամբարտանեալին մտտաբանը Պ. Փալատեան իր նախորդ դատաւարութեանը վրայ հիմնուելով պահանջեց իր բացակայութեան ամբարտանեալին որ վճիռը որիչ օրուան մը յետաձգուի: Գատաւորը արդէն լուսարանուած ըլլալով խնդրոյն վրայ, հարկ չի տեսաւ, ու հարստակ ընդհ. դատախազի պահանջման, միմիայն երեք ամիս բանտարկութեան դատապարտեց Ղուկասեանը, իբր պարզ անանկայեալ, և ոչ նենգութեամբ»:

Ահաւասիկ ամբարտանեալ թարգմանաբար՝ Պ. Փալատեանի գատաւարութեան՝ Միջազգային պատճառով ատենաւ իր նիստին մէջ:

«Պալատաւոր Ղուկասեան 1885 թուականին խորհրդին կ'ուզայ Եղիպտոս, ուր Գահիրէի Պէն-է-Սուրէյի փողոցին մէջ կը բնակ պղտիկ խանութ մը կոչակարութեան: Գործին սկզբնաւորութեանը ինք իր ձեռքովը կը կարէ, կը շինէ ու կը պատրաստէ կոշիկները, ու շնորհիւ իր պարկեշտ գործունեութեանը կը յաջողի բազմապատկել իր յաճախորդաց թիւը, գոմանտներ իրարու կը յաջորդեն, կուզայ օր մը որ Ղուկասեան իր հրամանին տակ կուենայ տասնեակ և աւելի գործաւորներ»:

«Յարգելի ընդհանուր գատախազ յանրաւի կ'ամբաստանէ թէ՛ Պ. Ղուկասեան 1,000 ոսթիւ գումար մը իւրացուցած է ի փեսա պարտապահանջներու, թէ՛ իր տեսակները գաղտնադրի պահած և անյայտացուցած է, իր նենգութիւնը երևան չի հանելու վախով»:

«Ամեն բանէ առաջ թոյլ տրուի ինչ պիտի տայ թէ՛ Պ. Ղուկասեան թէպէտ վստահական անուամբ ճանչցուած, բայց վստահական մը աւելի արուեստաւոր մըն է, իր խանութը մասողը կը տեսնէ գործաւորներու բազմութիւնը մը որ ձեռք ձեռքի տուած կ'աշխատին: Չեղաց աշխատութիւնն է որ կը տիրէ հոն փոխանակ առևտրին: Գործաւորները որոշեալ բանակով կը պատրաստեն կոշիկներ, երկիւղին սեպական յաճախորդին յանձնուելու համար: Գալով վաճառականները քնած նախնական ապրանքին՝ առտոր համար ալ միշտ թուղթի կտորներ գործածելով բաւականացած է, առանց տեսրի ստիւրութեան, բան մը որ առանց հոգեբարանական շարժառիթի չէ, որովհետեւ Պ. Ղուկասեան չէ այն վաճառականներէն որ մէկանց կը հիմնին վաճառատուն մը օծուելով պայն պաշտօնեաներով, մեծածաւալ ժուռանալներով ու տետրակներով: Պ. Ղուկասեան՝ է այն առևտրական նախապաշարեալ մարդոցմէ՝ որոնք աննշան ըլլալով կը սկսին գործի, ու վերջը որքան ընդարձակուած տեսնեն իրենց գործը, դարձեալ անցեալին ուղղութեանը հաւատարիմ մնալու համար ներկային մէջ ու և փոփոխութիւն կը մերժեն»:

«Վաճառականական տետրակ չունենալը վկայներու յայտարարութեամբը ևս հաստատուած է»:

«Գալով ազգիփի կորստեան անիրաւի թէ՛ Պ. Ղուկասեան իւրացուցած է իր պարտապահանջներուն զրամը, ընդհակառակը կորսնցուցած է: Պ. Ղուկասեան ծագումով խորհրդի, մին եղած է այն զոհերէն որոնք իրենց ունեցածը չունեցածը կորստին հալկաւ կ'անհանգստանալու կատարածին առեւը 1893 ին, ինչպէս որ ասի կը հաստատեն նաև իր պարտապահանջները թուով տասներեք՝ անցեալ տարուան Մայիս ամսոյ մէջ կըրուած հաշտարար գոնգորտաթոյլ մը մէջ որ Ապոսփի մահուամբ չիրականացաւ»:

«Կրնար երեկայից որ 17 հոգիէն, 13ը անոնք ալ պարտապահանջ ըլլալով, մէկտեղ գան ու համաձայնին, ի հաճոյս իրենց պարտատէրին բառ մը արտասանելու համար, եթէ պարտատէրը նենգաբար մէկն է»:

«Բոլոր այս բացատրութիւններէ և վկայից յայտարարութիւններէն բացարձակապէս կերկի թէ Պ. Ղուկասեան ոչ թէ նենգաբար անանկացեալ մ'է այլ՝ դիպուածին բերմամբ կորուսեալ անանկացեալ մը»:

2. — Նագարեթ Արագարս. — Տրամալի տեղական գատարանը վերաբնակելով Ապսինի գատարանի վերջին խնդրով Լուսիա Մելիքեանի, վաերացուց զայն իր ամբողջունթանմբը և գատարանոց գծիկին Լուսիա Մելիքեանի վճարել առ Տ. Նագարեթ Արագարս 25 եղիպտական ոսկոյ գումար մը՝ զոր կը պահանջէր սոյն վերջինը՝ իր վարձք Մելիքեանի ժառանգութեան հաշիւները բնական ըլլալուն համար:

Տիկին Լուսիա Մելիքեանի անարկած էր պահանջուած գումարին չափազանցութիւնը, բայց գատարանը նկատողութեան առած չէ: «Գատարանը գերազանց իրաւունք ունի հակառակ պայմանագրութեան՝ նուազեցնելու կամ բարեփոխելու փոխանորդային վարձքի համար պայմանագրի մը մէջ երկուստեք համաձայնութեամբ որոշուած գումարին քանակը»:

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

Վերջին 24 ժամուան մէջ եղիպտոսի մէջ ո ե է ժամանակտի դէպք պատահած չէ:

—Գալիթաունէն զրկուած հեռագրի համեմատ Յունիս 27ին արինահանգ կուր մը տեղի ունեցած է Միզզիացուց և Պոէրնեբու մէջ որ տեւած է արշալոյսէն մինչև երեկոյ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նօյսի վրէժիւս. — Սոյն թերթը Ռուսիա ծագած գործաւորական տաքսիսի առթիւ գրած մէկ խմբագրականին համար մէկ շաբաթ զազարման գատարարութեամբ:

Այս լուրը մեծ յուզում պատճառեց թանկացող Ռուսիոյ մէջ: «Նօյսի վրէժիւս» անանկարգ թերթերէն մին է Ռուսիոյ ուր կը գրեն Ռուսիոյ նշանաւոր օրէնագէտներն ու խմբագիրները:

—Իզատն. — Սոյն թերթը կը յանձնարարէ որ թրքական շուրթերուն վրայ շոգնուած բանեցնելու արտօնութիւնը միմիայն թուրքերուն արտի, այն պայմանաւ որ ասոնք խոստանան իրենց իրաւունքը օտարներուն չը ծախել:

—Պատոն սը Գեթեյի. — Բէլձէրի մարմինը գտնուած են որ Գերմանիա պիտի փոխադրուի մօտերս: Բէլձէր Զինի գերմանական զեւպանն էր որ անցեալ տարուայ խողովութիւններուն ասան Պօքսէրները ըսպանեցին:

—Լօրս Ռուսիայ. — Լոստրայի ոստիկանութիւնը անցեալ շաբաթ ձերբակալեց Լօրս Ռուսուկը՝ որ 1890 փետրուար 16ին Մապէլ Սոցօթի հետ կ'ամուսնանայ, քանի մը ամիս վերջը կը թողու իր կինը, յարաբերութիւն կը մշակէ Օր. Գուրի հետ: 1899 ին Լօրս Ռուսուկը և Օր. Գուրի կ'անցնուան ան կրիթին, Լօրս Ռուսուկը կը յաջորդի Ամերիկեան գատարանի մը առջև արձակման վճիռ ստանալ Մապէլ Սոցօթի դէմ, ու կ'ամուսնանայ իր սիրուհւոյն Օր. Գուրի հետ: Եղբորութիւնը կը հետագրէ «Թայմս»ին, հրատարակելու համար: Մապէլ Սոցօթի եղբորութիւնը իմացածին պէս՝ կը գիտէ Լոստրայի ոստիկանութեան, ճիշտ այն միջոցին որ Լօրս Ռուսուկը իր երկրորդ կնոջ հետ վերագարձած էր Լոստրան, և որ կը ձերբակալուի իր քայքայիկն:

Եթէ Ամերիկեան գատարանի արձակման վճիռը օրինաւոր նկատուի որ չենք կար

ծեր, Լօրս Ռուսուկը իրաւունք պիտի ունենայ ապրել իր երկրորդ կնոջ Տիկին Գուրի հետ:

—Հնդկաստանի ֆոն-արքայ. — Լօրս Գուրչօն՝ մօտերս Ազգիւս պիտի վերադառնայ ուրիշ պաշտօնով, և իր տեղը հաւանապարտ պիտի յաջորդէ Թոմասովայի հերոսներէն Սըր Ալֆրէա Միլնը:

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՄԱՐԴԱՀԱՍՄԱՐ' and 'Պ. Տը Գոնթանա կը հաստատէ ստակտ օստիոնեան կայսրութեան մէջ Հայոց թիւը'.

Իսկ ուրիշ Պետութեանց մէջ գտնուող Հայոց թիւն ալ մինչև հիմակ հրատարակուածներէն շատ աւելի է: Պ. Ռէքլի 840,000 է կը հանդիսանայ Հայոց թիւը, մինչդեռ նորագոյն ժողովարաններէն տեսնուեցաւ թէ 1,500,000 հայ կը գտնուին Ռուսիա: Նոյն Պ. Ռէքլի 150,000 հայ կը հաշուէր Պարսկաստան: Մինչդեռ 250,000ը աւելի պիտի մտնուէր ճշմարտութեան, բայց վերջին ուղեւորներու և Հայոց գրուած հոդին կարեւորութեամբ:

Վերջապէս ճշմարտ է նաև որ մօտ 100,000 մեկնելով թուրքիայէն զազթած են զանազան երկրներ, մասնաւորապէս Ամերիկա: Այս ամէնը նկատուած է ասան Գ. Ս. Միլնը Նիւտոնի արտօնութեամբ Հայոց թիւը հեռուեալ կերպով կը հաշուէ:

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Օստանեան կայսրութեան մէջ', 'Ռուս կայսրութեան մէջ', 'Պարսկաստան', 'Չինացիներ'.

Հետեւեալը ընդհանուր Հայոց թիւը մէկ միլիոն տեղի է նախապէս ցոյց տրուածին: Ինչ որ ալ ըլլայ, Հայոցը 3,500,000էն աւելի են, ոչ թէ պակաս, ինչպէս որ հայկական դատարանի կարգաւորութիւնը բեկանել տարու հետեւեալները ցոյց տուաւ կողմէն, 250,000, որ ի հասցնելով այդ թիւը:

ԿՐԵՏԵՒ ՄԻՆՕԹՈՒՐ

Կրետէն՝ «Իգլէր»ի զրկուած թղթակցութեան մը կը անդեկանանք թէ՛ անպիցացի ծանօթ հնագէտ Պ. Լիւանս երկար խուզարկութիւններէ վերջը յաջողած է Միլնոսի պալատը գտնել:

Ըստ առասպելական ավանդութեան այս պալատին մէջ է որ կը գտնուի Տէտալի կառուցած նշանաւոր Լաբիրինթոսը ուր բանտարկուած էր ճիւղայ Միլնոթոն: Միլնոթոն պատմութեան մէջ ծանօթ անուն մ'է, բայց անոր մանրամասնութեանց ծանօթանալու համար նախ պէտք է գիտնալ թէ ո՞վ էր փանիֆայէ: Փանիֆայէ՝ կրետէի թագաւոր Միլնոսի կինն էր որ սպիտակ ցուլի մը հետ սիրային յարաբերութիւններ մշակած էր, ու այդ սիրային յարաբերութեանց արդիւնքն ըլլալով ծնած էր Միլնոթոն, կէսը մարդ կէսը ցուլ ըլլալով: Միլնոթոն Լաբիրինթոսին մէջ բանտարկուած էր, ու վերջոյ թէւեւոսի միջոցաւ ազատուած:

Միլնոս երակայական թագաւոր մ'էր թէ իրականութեան մէջ իսկապէս գոյութիւն ունեցող, ասի կրնայ մտթ ըլլալ: Բայց յամենայն հանգէպ Միլնոս անունն ներքեւ պայտաի մը գոյութիւնը այսօր հնաստութիւնը գտած է:

Հետեւեալներու հրատարակութիւնը խնդրուած է խմբագրութեան:

ՅԱՆՎ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԵԱՆՑ

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Մեծ. Կարապետ էֆ. Տէր Աղամեան', 'Պարսկաստանի իտալացի', 'Մեծ. Սրբապետ էֆ. Վարդուհեան'.

Խորհուրդս պարտք կը համարի այսուն իր ջերմ շնորհակալութեամբ յայտնել ամեն նուիրատուաց, նաև առ Ազնուաշուր Գարրիէլ էֆ. Լէքիճեան, որ բարեհաճած էր իր հաշակաւոր լուսանկարչատան մէջ ձրիարար պատրաստել ընկերութեանս պաշտպանած որբերու պատկերէն բազմաթիւ օրինակներ, բնատեղէն աւելի յաջողած է:

Խնդրելով որ ընդունիք մեր խորին յարգանայ և կանխանուէր շնորհակալեաց հաստատին:

ՈՐԲԱՍՈՒՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ընկերութեանս Գործ. Ժողովը սոյն ազգարարութեամբ կուգայ ստիպողաբար խնդրել Գահիրէի և շրջակայից այն Պատ. ազգայիններէն՝ որոնց ընկերութեանս կողմէ զրկուած են «Լուսինեանք» գրքոյիններէն ինչպէս նաև Գեր. Ս. Առաջնորդին լուսանկարներ, որ հաճին անոնց փոխարժէքը և կամ՝ հակառակ պարագային՝ գիրք կամ լուսանկարը, անյապաղ վերադարձնել մեզ, ընկերութեանս գանձապետի հետեւալ հասցեով:

GARABED ERGENGATZIAN Rue Abdul—Aziz Caire

Ինչպէս արդէն ծանուցած է, «Լուսինեանք»ի հասույթէն գոյացած գումարը զրկուած է ու նոր գանձուածները նոյնպէս պիտի զրկուին Արաբիկի ընդհանուր որբերուն, որոնց եղկելի կացութիւնը անձանօթ բան մ'ըլլալու չէ ամեն զգայուն ազգայիններու: Գործադիր Վարչութեան Վ. Ատենադպրի Ատենապետ Ս. ՕՏԱՊՍԵԱՆ Ա. Մ. ՊԵՐՊԷՐԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՅԳԵԿՈՒԹՐ ՅԱՄԵՐԻԿԱՅ

Ա. Ս.

Ասիկ քսան-քսանը հինգ տարի առաջ Ամերիկայէն Տանկաստան վերադարձողներ իրենց նկարագրութեանց մէջ կ'ըսէին թէ չամիչը ո՞րչափ հազուադիւս և թանկագին ստարկայ մըն էր Մ. Նահանգներուն մէջ, թէ իբրև զեղ միայն կը գործածուէր, ևն: Բայց այսօր Ամերիկայէն, մանաւանդ Բա-

լիֆօրնիայէն, Տանկաստան վերադարձողներ բոլորովին տարբեր պիտի խօսին չամիչի նրկատմամբ: Փանդի թէև ոչ մէն փաւնտ չամիչ կ'արտադրէր Մ. Նահանգները ասիկ քսանը հինգ տարի առաջ, 1900 թուականին Քալիֆօրնիա արտադրած է իբր 90,000, 000 փաւնտ չամիչ:

Քալիֆօրնիայէն դուրս ուրիշ նահանգներու մէջ ալ չամիչ մշակելու փորձեր եղած են, բայց մինչև ցարդ յաջողութեամբ պըսակուած չեն: Քալիֆօրնիոյ մէջ աշխատողներն մի միայն կեդրոնական քանի մը գաւառներուն մէջ է որ չամիչի մշակութիւնը յաջողած է, թէպէտև նահանգին զրթթէ ամէն կողմը ամէն տեսակ ուտելու և գինիի խաղող առատապէս կ'արտադրուի: Ամերիկայի մէջ չամիչի հայրենիքն է Մէն-Ողին գետին հովիտը որ ընդարձակածաւալ դաշտ մըն է 200 մղոնի չափ երկայնութեամբ և 50-60 մղոն լայնութեամբ: Մէկ կողմը կը բարձրանայ Սիէրա Նեւադա լեռներուն լայնանիստ շարքը որ ծովուն մակերեսէն 13,000-15,000 ոտք բարձրութեան կը հասնի: միւս կողմը կ'երկնայ Գոստ Բէյն (Մոլիզեղեայ Շարք) կողմէ լեռնաշղթան որուն բարձրութիւնը 4,000 ոտքը չանցնիր: Այս դաշտը իբր կրեպուտ տարի առաջ ամառի անապատ մըն էր որուն արևակէղ աւազներէն բան մըն ալ բուսցնելու յարմար չէին սեպուեր: Չորս անուն հովիտ մը իր ոչխարները արածած միջոցին զիտեց թէ փինկէղ գետը, Սէն Ողինի մէկ ճիւղը, որ դաշտին մէջէն կ'անցնէր, կրնար առուներով կամ ջրանցներով ամբողջ դաշտը ոռոգելու գործածուիլ: Իրեն համահունչներ ալ գտնելով ջրանցներ շինեց և այս կերպով հաստատուեցաւ ոռոգման այն ընդարձակ զրոկիւնը որ այսօր այդ չոր և խոպան անապատը վերածած է պտղաբեր և յուսթի պաշտի մը որ ընդունակ է արտադրելու ամէն տեսակ պտուղ, մանաւանդ չամիչ:

Սէն Ողին դաշտը թէ՛ դիրքով թէ՛ կը լինայով շատ կը նմանի Կիլիկիոյ Ամրգ Օվաթը կոչուած դաշտին: որուն մէկ անկիւնը կը գտնուի Հայկ, մէկ անկիւնը Բիլիս և մէկ անկիւնը Արտիք: Ամրգի հողը անտարակոյս աւելի բարեբեր է և եթէ ճախիններէ մարտի և մէջէն անցնող Ալֆրէն Ռոնդէն (Ալր) գետերուն միջոցով ոռոգուի, անշուշտ Սէն Ողի հովիտէն աւելի բարդաուած կը պտնայ: Բայց օպասեք որ Տանիլը վերնայ:

Յիւզիօ քաղաքը, որ Քալիֆօրնիա նահանգին աշխարհագրական կեդրոնն է, կը գտնուի չամիչ արտադրող շրջանին ճիշտ մէջտեղ: Քալիֆօրնիոյ արտադրած չամիչին իբր երկու երրորդը Յիւզիոյի քանդիկէն կ'ելլէ, և նահանգիս մէջ արտադրուած չամիչը մաղելու, սնտուկներու մէջ լիցնելու և վաճառման համար պատրաստելու գործողութեանց մեծագոյն մասը Յիւզիոյի մէջ կը կատարուի. ահա այդ պատճառաւ Յիւզիոյի «Չամիչի Քաղաքը» սիւղոսն ալ կուտան: Առաջին չամիչի այգին Յիւզիոյի մէջ աքնուիւեցաւ 1873ին: Այս ձեռնարկը յաջողութեամբ պտակուած ըլլալով, աղէն տարի շատ մը ուրիշ այգիներ ալ հետզհետէ աքնուիւեցան. այնպէս որ վեր ի վերայ հաշուով մը տեսնուեցաւ որ անցեալ (1901) տարի Քալիֆօրնիոյ մէջ 75,000 էլքը չամիչի այգի կար:

Հայերը թէ՛ իբրև կալուածատէր թէ՛ իբրև վարձակալ ձեռքբերին այժմ՝ ունին մատուորակաւ 5,000 էլքը այգի որ ամբողջութեան կարևոր մէկ սասն է նկատի առնելով Հայոց թիւին նուազութիւնը բազմատամբ ըրնդհանուր բնակչութեան թիւին:

Կոյնակ Le Gérant J. MUNIER. Տպա. «Միութիւն» — Բ. Ս. Փափակագանք